

Օտարութեան եւ օտար շրջանակներուն մէջ ծառայող հայ մշակներ երբեք չեն մոռցած իրենց արմատը հանդիսացող ՀԱՅՈՒԹԻՒՆԸ:

Պատրիարք Սրբազան Հայրը իր գնատանքը եւ գոհունակութիւնը յայտնեց տաղանդաւատ գոյգ արուեստագէտներու ելոյթներուն առիթով:

Պրօֆ. Յովհաննէս Փիլիկեանին մէջ գնահատեց գիտութեան մարդը, լեզուագէտը, քանաստեղծը, Յոյն թատերականէն մինչեւ արդի Հայ եւ օտար 40 քեմադրութիւններ վերլուծողը, քեմադրիչը, եւ «Ես խայ եմ» խօսքին լեզուագիտական վերլուծումներուն եզրակացութիւնը զինք կը տանի դէպի մարդ արարածին գոյառումը «ի Հայաստան Լեռնաշխարհի»:

Պրօֆ. Խաչիկ Փիլիկեան իր «Կոմիտասը Իրրեւ Բանաստեղծ» դասախօսութեամբ վայելք տուաւ վայելուչ ասմունքողի, Կոմիտասի զգայուն հոգին, կեանքը եւ առաքելութիւնը պարզաբանողի: Նոյնպէս իրրեւ թէնոր մեներգիչ, Խաչիկ Փիլիկեան ապրումով ներկայացուց «Կոմիտասեան Համերգ» յայտագրին 20 մեներգները, որոնք ընտրուած են Կոմիտասի հաւաքածոյին եւ մեր ժողովուրդի կեանքին եւ ապրումներուն այլազան երեսակներէն:

Ի. Ս.

ԶՈՅԳ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐՈՒ ԱՅՑԸ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան եւ Կ. Պոլսոյ Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան շարաքական այցով մը Յուլիս 27էն Օգոստոսի 3, հիւրընկալուեցան Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետին կողմէ ի Ս. Էջմիածին:

Վեհափառ Հայրապետը եւ Պատրիարք Սրբազան Հայրերը Բիւրականի Հայրապետական Ամարանոցին մէջ ունեցան խորհրդակցութիւն: Խորհրդակցութեան ընթացքին քննարկուեցան 1700 ամեակի տօնական հանդիսութիւններու կազմակերպման, այդ առիթով Մայր Աթոռ հրաւիրուելիք քոյր եկեղեցիներու պետերու ընդունելութեան հետ առընչուած, ինչպէս նաեւ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ ներքին կեանքին վերաբերեալ շարք մը հարցեր:

1700 ամեայ յորելեանը, որպէս մեր ժողովուրդի հոգեւոր կեանքի եւ Հայ եկեղեցւոյ վերանորոգութեան եւ անոր առաքելութեան լիարժէք իրականացման առիթ եւ անհրաժեշտութիւն, կարեւորուեցաւ անոնց կողմէ: Առանձնական խորհրդակցութիւններէ յետոյ, Յուլիս 31ի երեկոյեան, Նորին Սրբութեան նախագահութեամբ Պատրիարք Սրբազանները Բիւրականի Հայրապետական Ամարանոցին մէջ հանդիպեցան Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամներու, Մայր Աթոռի եպիսկոպոսներու եւ թեմական վարդապետներու հետ:

Խորհրդակցութիւնները անցան արդիւնաւէտ՝ հաստատելով Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցւոյ Նախագիտական Աթոռներու միջեւ եղբայրութեան ու համագործակցութեան ոգին:

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ